ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(*Սուրբ Էջմիածին, 2005 թ. Յունուարի 6*)

«Եւ ծանիջիք զճշմարտութիւնն
և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ»
(*Յովհ. 8. 32*):

Սիրելի ժողովուրդ

Սուրբ Ծննդեան աւետիսով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք ձեզ ի Հայաստան և ի Սփիւռս և ձեզ հետ միասին փառաւորելով մեր Փրկիչ Տիրոջ Անունը, Իջման Սուրբ Սեղանի առջև հնչեցնում ենք Տէրունական խօսքը. «Եւ կը ճանաչէք ճշմարտութիւնը, և ճշմարտութիւնը ձեզ կազատի»:

Ճանաչել ճշմարտութիւնը: Որքան երկար է փնտրել մարդը այն՝ հին աշխարհից մինչ օրս իր փնտրտուքը արտայայտելով իմաստասիրական մտածումներով, արուեստի ու գրականութեան կերպաւորումներով, ընկերային կեանքի վերափոխութիւնների ու բարեկարգութիւնների ծրագրերով: Մարդկութեան լաւագոյն մտքերը, ազնիւ ձգտումներն ու ջանքերը ուղղուել են այդ փնտրտուքին՝ ո՞րն է ճշմարտութիւնը: Մարդը փնտրել ու փնտրում է ճշմարտութիւնը իր աշխարհում, բայց աստուածային բարձունքներից է ճշմարտութիւնը պարզուել մարդկութեանը՝ Բեթղեհէմի աստղալոյսով առաջնորդելով դէպի մսուրի մէջ ծնունդ առած Փրկիչ Մանուկը: Մարդացեալ Աստուածորդին է ճշմարտութիւնը, որ վկայեց Աստուծոյ անբաւ Սէրը արարածներիս հանդէպ: Աստծուց հեռացած մարդը երբէք չպիտի յուսար տեսնելու կամ ճանաչելու ճշմարտութիւնը, բայց Յիսուսով ճշմարտութիւնը ինքը մեր մէջ է՝ աստուածայինը միաւորելու համար մարդկային մեր կեանքին: Իր Յայտնութեամբ Յիսուս ճշմարտութեան սահմանները դուրս բերեց մարդկային կեանքի սահմանափակումներից, մարդկային չափանիշներից և տարաւ դէպի յաւիտենականը. «Ես եմ ճանապարհը և ճշմարտութիւնը և կեանքը» (*Յովհ. 14. 6*):

Այսօր մարգարէներն են խօսում, որ պատգամաբերը եղան փրկութեան մասին Աստուծոյ խոստումի և սպասեցին ու յուսացին Փրկչին. այսօր Մանուկ Փրկչին իրենց ընծաներն են մատուցում իմաստուն մոգերը, որ տեսան երկնքում պայծառ շողացող աստղը և ընթացան դէպի փրկութիւնն աշխարհի. այսօր հովիւները՝ երկնքի բացուած ողորմութեան առջև ձայնակից հրեշտակներին, օրհնաբանում են խանձարուրի մէջ մսուրում դրուած Փրկիչ Մանկանը: Նրանք ճանաչեցին աշխարհ մտած Աստուծոյ շնորհը, որը ազատում է չարիքներ ծնող մեղքից, հեռու պահում մոլորութիւններից, պահպանում կործանարար ճանապարհներից: Ոչինչ այլ բան, մարդկային ոչ մի ստեղծագործութիւն, ծրագիր չի կարող նորոգել, վերափոխել մարդու հոգին, բայց միայն մարդկային կեանքում Աստուծոյ ներկայութեան հաւատը, որով իրականանում է հոգևոր վերածնութիւնը և բարոյական առաջադիմութիւնը մարդկութեան:

digitised by A.R.A.R.@

«Եւ կլ՝ ճանաչէք ճշմարտութիւնը, և ճշմարտութիւնը ձեզ կազատի» հնչում է շուրջ երկու հազար տարի, որ մարդկութեան հայեացքը վեր գնայ ու տեսնի փրկութեան լոյսը և հաւատայ, որ Քրիստոսով ազատ է ինքը, հաւատայ, որ Քրիստոսով բաց է ճանապարհը դէպի ճշմարտութեան, արդարութեան ու սիրոյ աշխարհը: Հաւատն անկարօտ է ապացոյցների, բայց հաւատի ապացոյցը վերանորոգուող հոգին է, ճշմարտութեամբ ազատ հոգին, որը ձգտում է վերափոխել աշխարհը, առաջնորդել դէպի բարին, դէպի ճշմարիտը:

Տագնապներ են տիրում այսօր աշխարհի տարբեր կողմերում, մարդկութեան առջև բարձրանում են պետութիւնների ու ժողովուրդների յարաբերութիւնների հարցեր, հասարակական կեանքի վերափոխումների պահանջներ, բնական աղէտներ և մարդկային գործունէութեան արդիւնքում ծնունդ առած արհաւիրքներ, ընկերային, բարոյական և բազմաթիւ այլ խնդիրներ, որոնց վճռման համար մարդիկ փնտրում են գտնելու ճիշտ պատասխանները ու ճիշտ ճանապարհները: Մարդկային ամեն որոշում, ամեն գործունէութիւն Աստուծոյ ներկայութեան յարաբերութեամբ է, որ հաստատուում է իր արժէքի մէջ՝ բարի է, թէ չար, ընդունելի, թէ մերժելի, ժամանակաւոր ու անցողիկ է, թէ յաւիտենական ու անկորնչելի՝ կեանքը դէպի բարօրութիւն ու երջանկութիւն առաջնորդող: Փրկչի հետ է, որ մենք ճշմարտապէս ազատ ենք և մեր քայլերով ու որոշումներով կարող ենք աշխարհում հաստատել արդարութիւնը՝ հակառակ անիրաւութեան, սէրը՝ հակառակ ատելութեան ու թշնամանքի, խաղաղութիւնը՝ հակառակ բռնութեան ու պատերազմի:

Սիրելի ժողովուրդ

Քրիստոսով մարդկութեանը յայտնուած ազատարար ու փրկարար ճշմարտութիւնը լուսաւորել է մեր ժողովրդի անցեալի ճանապարհը ու պիտի լուսաւորի մեր ներկան ու գալիքը: Ճանաչեցինք ճշմարտութիւնը, որը կերտեց ստեղծարար, հանճարածնունդ ոգին մեր մշակոյթի, կերտեց մեր պատմութիւնն առաջնորդող վերածննդի ոգին: Ստեղծեցինք կեանքի սիրով, ապրելու հաւատով, ապրեցինք ու նահատակուեցինք Քրիստոսի ազատ ժողովուրդ ու երկիր լինելու ձգտումով: Հողմերից հալածուած՝ ուր էլ սփռուեցինք, մեր հոգևոր երկնքում բարձր ու անմար շողաց Բեթղեհէմի աստղալոյսով վառուած Լուսաւորչի Կանթեղը, որ անսասուեր լոյսով պահպանեց մեզ միասնական ու ամբողջական, պահպանեց յոյսերը մեր ժողովրդի՝ խաղաղ ու հաշտ աշխարհի և իր միացեալ կեանքի ու պայծառ գալիքի:

Աստուածատես ազատ հոգու շնորհներով են ծնունդ առել Մաշտոցեան ոսկեդէնիկ մեր գրերը, որոնց 1600-ամեակը պիտի տօնախմբենք այս տարի՝ ոգեկոչելով Աստուածաշունչ Մատեանի հայերէն թարգմանութեան ու Սահակ-Մեսրոպեան կրթութեան ու լուսաւորութեան սուրբ յիշատակները: 90-ամեայ տարելիցն ենք նշելու նաև Մեծ Եղեռնի՝ հաստատելով մեր հաւատարմութիւնը անթիւ մեր նահատակների հաւատքին, հայոց նոր կեանքի նրանց տեսիլքին: Մեր անմեղ զոհերի յիշատակի ոգեկոչումով վերստին պիտի հնչեցնենք հրաւէրը Ցեղասպանութեան ճանաչման՝ յանուն բռնութիւններից ազատ, արդար աշխարհի: Փառք Տիրոջը, Հայաստանի անկախութիւնը և Արցախի ազատագրութիւնը յոյսի դռներն են բացել արդարութեան յաղթանակի, հայրենի հողում մեր ժողովրդի ապահով կեանքի ու արարումների, որոնք պիտի լինեն ի Քրիստոս մեր հաւատի նոր վկայութիւններ: Հայաստանում, Արցախում և աշխարհի բոլոր կողմերում մեր ժողովուրդը այսօր զարթեալ հաւատով մարմնաւորում է ստեղծագործ կեանքի իր դարաւոր երազները ու պիտի շարունակի իր աւանդը բերել պետութիւնների ու ժողովուրդների խաղաղասէր ջանքերին:

digitised by A.R.A.R.@

Սիրելի ժողովուրդ հայոց, Բեթղեհէմի աստղն այսօր առաջնորդում է մեզ դէպի մսուրը Փրկչի, ուր յաւիտենականը ծնունդ առաւ, անպարփակելին պարփակուեց, անիմանալին ազատարար ճանաչուեց: Չվարանենք ճշմարտութիւնը ճանաչելու, բարին գործելու, միմեանց ծառայելու, Քրիստոսին ծառայելու: Մի կողմ թողնենք այն ամէնը, ինչ պիտի խանգարի մեզ յետևելու Նրա լոյս ընթացքին, Նրա ազատարար ընթացքին: Ազատութիւնը այն մեծագոյն շնորհն է, որի մէջ պիտի պտուղներ տան մեր յոյսերն ու ձգտումները՝ կառուցելու խաղաղ ու բարօր կեանք, ազատ հասարակութիւն: Մեր Հայրենիքի ազատութիւնը ոչ միայն պիտի պաշտպանենք, այլև ազատութիւն դարձնենք իւրաքանչիւրիս համար: Ազատութիւնը բարու մեր ընտրութիւնն է, որը նաև պայքար է չարի դէմ: Քրիստոսասէր, ճշմարտասէր մեր գործերով պիտի մեր հողից վերացուեն աղքատութեան և օրինազանցութեան չարիքը, մեր իրականութիւնից դուրս մղուեն անտարբերութիւնն ու անհանդուրժողութիւնը և հաստատուեն ճշմարիտ մարդասիրութեան բարիքները: Մեր եղբայրութեան մէջ, մեր արդարութեան մէջ, մեր սիրոյ մէջ է, որ պիտի յաջողուեն մեր ծրագրերն ու գործերը՝ ուղղուած մեր Հայրենիքի շինութեանն ու զօրացմանը, ընկերային կեանքի վերափոխութեանը, Սփիւռքում ազգային կեանքի պահպանութեանն ու զարթօնքին, մեր զաւակների կրթութեանը, մեր մշակոյթի զարգացմանը և մեր ժողովրդի բոլոր հոգեների իրականացմանը:

Փրկչի օրհնութիւնն է իջնում աշխարհին: Աստուածակառոյց Սուրբ էջմիածնից, մեր Տիրոջ և Փրկչի Իջման Սուրբ Սեղանից Սուրբ Ծննդեան աւետիսն ենք յղում և Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը՝ ի սփիւռս աշխարհի հաւատաւոր համայն մեր ժողովրդին: Ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետութեան Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին, Հայ Եկեղեցու ուխտապահ ու նուիրեալ ողջ հոգևոր դասին:

Աստուածայայտնութեան օրհներգութիւնը Մեր շուրթերին, սիրով ի Քրիստոս՝ ողջունում ենք մեր քոյր եկեղեցիների հոգևոր պետերին և Տիրախնամ նրանց հօտին:

Հայրապետական օրհնութեամբ Սուրբ Ծննդեան Մեր բարեմաղթութիւններն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկադի Ղուկասեանին, հայոց ողջ պետական աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու միջազգային կազմակերպութիւնների բոլոր ներկայացուցիչներին:

Ծունր դնենք Մանուկ Յիսուսի սնարի առջև և հայցենք, որ Աստուծոյ ներկայութեամբ վերանորոգուող հոգին նաև մերը լինի և դէպի բարին ու ճշմարիտը առաջնորդուող կեանքը նաև մեր կեանքը լինի Մայր Հայրենիքում և Սփիւռքում: Աղօթենք միասնաբար, որ Բարեգութն Աստուած Սուրբ Հոգու մխիթարութեամբ սփոփի Հեռաւոր Արևելքի երկրներում բնական աղետից տուժած հազարաւոր մարդկանց սրտերը և իր անբաւ ողորմութեամբ հանգստութիւն շնորհի զոհուածների հոգիներին: Թող երկնառաք խաղաղութիւնը հաստատուի համայն աշխարհում, ի մասնաւորի՝ այսօր պատերազմի վտանգների մէջ ապրող ժողովուրդների կեանքում, և թող աստուածատես ճանապարհները առաջնորդեն մարդկութեան ընթացքները դէպի հաշտութեան, արդարութեան ու եղբայրութեան եզերքներ, դէպի աւելի ու աւելի բարօր, առաջագնաց ու երջանիկ կեանք, դէպի փրկութիւն և յաւիտենութիւն:

Քրիստոս Ծնաւ և Յայտնեցաւ,
Ձեզ և Մեզ Մեծ Աւետիս

digitised by A.R.A.R.@